



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2019

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնս վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 78

ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ

Լսեցէք ինչ որ կ'ուսուցանեմ, ով իմ ժողովուրդս, ականջ դրէք ըսելիքներուս:  
 Մենք մեր գաւակներէն պիտի չպահենք, այլ՝ գալիք սերունդներուն պիտի պատմենք  
 Տիրոջ հզօր գործերը՝ օրհներգութեան արժանի, անոր կատարած սքանչելի գործերը:  
 Որպէսզի նոր սերունդները իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնեն.  
 Հմուռնան ինչ որ անիկա ըրաւ, այլ՝ անոր պատուէրները գործադրեն:  
 Անհնազանդ եւ ապստամբ չըլլան իրենց նախահայրերուն նման.  
 այն սերունդին՝ որ Աստուծոյ չվստահեցաւ, եւ Աստուծոյ հաւատարիմ չեղաւ:  
 Մոռցան իրենց համար Աստուծոյ ըրածները, անոր ցոյց տուած սքանչելի գործերը:  
 Աստուած անոնց հայրերուն դիմաց հրաշքներ ըրաւ ծովը ճեղքեց եւ անոր մէջէն անցուց զանոնք,  
 զանոնք առաջնորդեց ցերեկը՝ ամպով, եւ գիշերն ամբողջ՝ կրակի սիւնով:  
 Անապատին մէջ ժայռերը ճեղքեց եւ առատօրէն խմելիք ջուր տուաւ անոնց՝ երկրին խորերէն:  
 Բայց անոնք շարունակեցին Աստուծոյ դէմ մեղանչել:  
 Գիտակցաբար զԱստուած փորձեցին՝ իրենց ցանկացած կերակուրները ուզելով:  
 Աստուծոյ դէմ խօսեցաւ, եւ ըսին.  
 «Աստուած կրնա՞յ անապատին մէջ ուտելիք տալ»:  
 Եւ Աստուած վերէն հրաման տուաւ ամպերուն, եւ երկինքին դռները բացաւ,  
 եւ որպէս ուտելիք՝ երկինքէն մանանայ տեղացուց երկնային հաց տուաւ անոնց:  
 Մարդիկ հրեշտակներու հացէն կերան:  
 Անոնց վրայ փոշիի առատութեամբ միս տեղացուց:  
 Անոնք կերան առատօրէն, եւ լիացան Աստուած իրենց ցանկացածը տուաւ:  
 Հակառակ այդ բոլորին, անոնք դարձեալ մեղանչեցին, չհաւատացին անոր գործած հրաշքներուն:

### ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
 աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԹԸ



## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

11:1-23

### ԵՐԵՄԻԱ ԵՒ ՈՒԽՏԸ (11:1-17)

Աստուած հաւաքարարիմ է, եւ այդ հաւաքարարմութիւնը ցոյց կը փրոյի անգամ մը եւս յիշեցնելով այն ուխարը, որ Աստուած կնքեց Իսրայելի նախահայրերուն հետ, խոստանալով անոնց փառք այն երկիրը, ուր կաթ եւ մեղր կը բխի, պայմանաւ որ անոնք մտնեն Աստուծոյ ձայնը եւ Անոր հրամանները գործադրեն, որպէսզի անոնք Իրեն ժողովուրդ ըլլան, իսկ Ան իրենց Աստուածը: Իսկ եթէ մտնեն չորին, անհիծեալ ըլլայ ան, որ մտնեն չորին (3-5 հմր): Եւ ժողովուրդը կը պատասխանէ, ըսելով. «Ամէն, ով Տէր», որ կը նշանակէ համաձայն ենք, ու պատրաստ ենք գործադրելու Քու հրամաններդ: Նոյն վիճակը, որ կը յիշեցնէ Բ Օրինաց 27:26, «Անհիծեալ ըլլայ ան՝ որ այս օրէնքին բոլոր խօսքերուն մէջ չի կենար, որ զանոնք կատարէ»: Ահա այդ անէծքէն պիտի փրկէր մեզ, Յիսուս Քրիստոս, որ աշխարհ գալով մարդացաւ, ու մանաւանդ՝ անէծքի փակ մտաւ, որպէսզի մեզ ազատէ մեղքի անէծքէն (Գաղ 3:12): Աստուծոյ փրկած խոստումը, անոնց Աստուած ըլլալու, գիրենք առաջնորդելու եւ պաշտպանելու:

Բաւարար չէ միայն լսող ըլլալը, եթէ երբեք գործադրումը չկայ այդ լսումին: «Այս ուխարին խօսքերուն մտնելը ու զանոնք գործադրեցէք» (6 հմր): Աստուծոյ համբերաբարութիւնը յափառելու ցոյց կը փրոյի, երբ կ'ըսէ. «Ձեր հայրերը խաբարեցի, զանոնք Եգիպտոսի երկրէն հանած օրէս մինչեւ այսօր» (7 հմր): Կը նշանակէ, փարբեր փարբեր առիթներով, Աստուած միջամտեց անոնց կեանքին մէջ, որպէսզի անոնք դարձնուէն անոնց, Աստուծոյ վերադառնան, բայց ընդհակառակը. «Անոնք մտնել չորին ու իրենց ականջը չխոնարհեցուցին, հապա ամէն մարդ իր չար սրտին կամակորոթեանը համեմար քալեց, ուստի եւ ալ անոնց վրայ պիտի բերեմ, այն ուխարին բոլոր խօսքերը, որոնք եւ անոնց պատուիրեցի որ ընեն, բայց անոնք չորին» (8 հմր): Ոչ թէ միայն մտնել չորին, այլ նաեւ՝ անոնց մէջ դաւաճանութիւն գտնուեցաւ, անոնք հեպտեւեցան իրենց նախահայրերուն անօրէնութիւններուն, որ օտար աստուածներու երեսէ գացին, որպէսզի անոնց ծառայութիւն ընեն (9 հմր): Այդ իսկ պարճառով անոնք իրենց հայրերուն հետ եղած ուխարը աւերեցին (10 հմր): Արդիւնքը. «Անոնց վրայ այնպիսի չարիք պիտի գայ, որմէ պիտի չկրնան ազատիլ: Աստուծոյ կանչէն, բայց Աստուած մտնել պիտի չընէ: Օտար աստուածներուն պիտի երթան: Անոնք երբեք պիտի չկրնան օգնել, մանաւանդ՝ ձախորդութեան ժամանակ» (11-14 հմր):

Ահա Աստուծոյ կապը Իր ժողովուրդին հետ, պարզ ու սովորական կապ մը չէր, այլ՝ սիրոյ կապ: «Իմ սիրելիս ի՞նչ բաժին ունի իմ փանս մէջ, որովհետեւ ան շարքերուն հետ անօրէնութիւն գործեց: Սուրբ գոհն ալ քեզմէ վերցուեցաւ, որովհետեւ իր ըրած չարութիւնովը կ'ուրախանայ» (15 հմր): Այնպէս ինչպէս այր եւ կնոջ միջեւ եղած սիրոյ կապի նման, որ յանկարծ այդ կապը կը խաղարուի, երբ անօրէնութիւն, դաւաճանութիւն գտնուի: Առաւել եւս, Աստուած Իր ժողովուրդը նմանցուցեր էր «կանաչ, գեղեցիկ ու բարեպտուղ ձիթենիի, բայց կրակը բռնկեցուց, եւ անոր ոտքերը սպառեցան» (16 հմր): Բայց ինչո՞ւ պէտք է բռնկի, որովհետեւ պէտք էր պարզ փար, որովհետեւ կանաչ, գեղեցիկ ու բարեպտուղ ձիթենիի պէտք էր: Քրիստոսի խօսքերը յափառ են, այն ծառը, որ պարզ չի փար կը կտրուի ու կրակը կը ձգուի (Մատթ 7:19): Պէտք է պարզ փառ, որովհետեւ փնկողը գործերու Տէրն է, ուրեմն կը նշանակէ գործերու Տէրը փրկած է ամէն փեսակի հնարաւորութիւնը, ու մանաւանդ՝ շնորհքը պարզ փառ: Բայց ահա Իսրայելի ու Յուդայի փան չարութեան համար, անոնց գլուխ չարիք է որ պիտի գայ (17 հմր): Իսկ ի՞նչ էր այդ չարութիւնը. Բահաղի խունկ ծխել, անով զԱստուած բարկացուցին:

### ԴԱՒ ՍԸ ԵՐԵՄԻԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ԴԷՍ (11:18-23)

Ահա Տէրը ցոյց կու փայ, թէ այս բոլորին համար, որովհետեւ մարգարէն պիտի մարգարէանայ եւ Աստուծոյ պատգամը փոխանցէ ժողովուրդին, անոնց անօրէնութեան համար, անոնք երբեք ալ պիտի չուզեն լսել, առաւել պիտի ուզեն սպաննել իրեն, ուր մարգարէն կը նմանի մորթուելու փարուող գառնուկի: Այս պատկերացումին մէջ ոչ միայն մարգարէին մասին է, այլ նաեւ գալիք ճշմարիտ Գառնուկին, որ դարձեալ մորթուելու փարուողի պէտք պիտի ըլլար, Իր իսկ ազգակիցներուն կողմէ, Յիսուս Քրիստոս (18-19 հմր): Այս վիճակին դիմաց մարգարէն Աստուծոյ արդար դատաստանին կը դիմէ, Աստուած որպէս արդար Դատարար: Տէրը կ'ըսէ. «Ձանոնք պիտի պատժեմ, կտրիճները սուրով պիտի մեռնին, իսկ անոնց փոքրն ու աղջիկները սովամահ պիտի ըլլան» (22 հմր):